Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանյան Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմական բազայի գտնվելու հետ կապված գործերով իրավասության և փոխադարձ իրավական օգնության հարցերի վերաբերյալ

Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանյան Դաշնու-թյունը, այսուհետև անվավելով Կողմեր,

ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմական բազայի մասին Ռուսաստանյան Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև 1995թ. մարտի 16-ի Պայմանագրի դրույթներով,

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմական բազայի գտնվելու հետ կապված գործերով փոխադարձ իրավական օգնության ցուցաբերման հարցերում Ռուսաստանյան Դաշնության և Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների միջև համագործակցության անհրաժեշտությունը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հ Ո Դ Վ Ա Ծ Ի

Սույն Համաձայնագրի նպատակների համար ներքոհիշյալ տերմինները նշանակում են.

1.«Ռուսաստանյան ռազմականյանի տեղաբաշխման կետ»- Կողմերի միջև համաձայնեցված, տարածքայնորեն սահմանափակված և նշված տեղանքի հողատարածքը, նրա վրա տեղակայված շարժական և անշարժ գույքով՝ Հայաստանի Հանրապետության տարածքում նախատեսված ստորաբաժանումների, զորամասերի, ձեռնարկությունների, հիմնարկների և ռուսաստանյան ռազմականյանի այլ կազմավորումների տեղակայման համար:

2. «Իրավասու մարմիններ».

Ռուսաստանյան Դաշնության համար - զինվորական դատարանները և զինվորական դատախազության մարմինները, Ռուսաստանյան Դաշնության Դաշնակցային անվտանգության ծառայությունը, որոնք ստեղծվում են զինվորական կազմավորումների սպասարկման համար, ինչպես նաև զինվորական պարետները, զորամասերի հրամանատարները /որպես հետաքննության մարմին/, որոնք գտնվում են ռուսաստանյան ռազմական բազայում:

Հայաստանի Հանրապետության համար - դատարաններ, դատախազության, ներքին գործերի և ազգային անվտանգության մարմիններ, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետաքննության մարմիններ, այլ վարչական մարմինները, որոնց իրավասության մեջ են մտնում Ռուսաստանյան Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմական բազայի մասին պայմանագրով կարգավորվող հարցեր:

3. Սույն համաձայնագրի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմական բազայի մասին 1995թ. մարտի 16-ի Ռուսաստանյան Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև պայմանագրի 1-ին հոդվածում պարունակվող սահմանումները:

ՀՈԴՎԱԾ 2

Կողմերի իրավասու մարմինները միմյանց իրավական օգնություն են ցույց տալիս Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմական բազայի գտնվելու հետ կապված քաղաքացիական, ընտանեական, քրեական գործերով և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով:

Համաձայն 1993թ. հունվարի 22-ի քաղաքացիական, ընտանեական և քրեական գործերով իրավական օգնության և իրավահարաբերությունների մասին Կոնվենցիայի իրավական օգնությունը իր մեջ ներառում է փաստաթղթերի հանձնման մասին խնդրանքների կատարումը և դատավարական, հետախուզական և այլ գործողությունների վարույթը:

ՀՈԴՎԱԾ 3

Իրավական օգնություն ցուցաբերելիս Կողմերի իրավասու մարմինները փոխգործակցում են անմիջականորեն միմյանց միջև, իսկ անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան վերադաս մարմինների միջոցով:

Հանձնման, քրեական հետապնդման հարցերով հարաբերությունները, ինչպես նաև քաղաքացիների իրավունքներին առնչվող քննչական հանձնարարությունների կատարումն իրականացվում են Կողմերի իրավասու մարմինների միջոցով, նրանց օրենսդրությանը համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 4

Ռուսաստանյան ռազմական բազայի կազմի մեջ մտնող անձանց և այդ անձանց ընտանիքների անդամների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված հանցագործությունների և այլ իրավախախտումների վերաբերյալ գործերով, կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, գործում են նրա իրավասու մարմինները:

ՀՈԴՎԱԾ 5

Ընդ որում սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածում նախատեսված կարգը չի կիրառվում ռուսաստանյան ռազմական բազայի կազմի մեջ մտնող անձանց և այդ անձանց ընտանիքների անդամների կողմից կատարած հանցագործությունների և այլ իրավախախտումների գործերով.

-ռուսաստանյան ռազմական բազայի տեղակայման կետերի տարածքում,

-կատարված Ռուսաստանյան Դաշնության կամ ռուսաստանյան ռազմական բազայի կազմի մեջ մտնող անձանց և այդ անձանց ընտանիքների անդամների դեմ,

-զինվորական հանցագործությունների վերաբերյալ գործերով:

Սույն հոդվածում նշված հանցագործությունների վերաբերյալ գործերով կիրառվում է Ռուսաստանյան Դաշնության օրենսդրությունը, գործում են նրա իրավասու մարմինները:

Սույն հոդվածի դրույթները տարածվում են նաև անհայտ անձանց կողմից ռուսաստանյան ռազմական բազայի տեղակայման կետերի տարածքում կատարած հանցագործությունների վրա: Հանցագործություն կատարած անձի հայտնաբերվելու դեպքում գործում է սույն համաձայնագրով սահմանված կարգը:

ՀՈԴՎԱԾ 6

Մի խումբ անձանց մեկ կամ մի քանի հանցագործությունների կատարման մեջ մեղադրելու դեպքում, եթե մեղադրյալներից թեկուզև մեկի գործը վերաբերում է Հայաստանի Հանրապետության իրավասությանը, ապա բոլոր մեղադրյալների գործերը քննվում են Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից: Կողմերի իրավասու մարմինների համաձայնությամբ, ռուսաստանյան ռազմական բազայի կազմի մեջ մտնող անձանց և նրանց ընտանիքների անդամների վերաբերյալ գործերը առանձնացվում են առանձին վարույթի մեջ և հանձնվում են Ռուսաստանյան Կողմին:

Կողմերի իրավասու մարմինները կարող են նաև այլ դեպքերում դիմել միմյանց՝ քրեական հետապնդումը հանձնելու միջնորդություններով:

ՀՈԴՎԱԾ 7

Ռուսաստանյան Կողմի իրավասու մարմինները անհապաղ ծանուցում են Հայկական Կողմի իրավասու մարմիններին Հայաստանի Հանրապետության իրավասությանը վերաբերող կատարված և պատրաստվող հանցագործությունների մասին, որոնց կատարման մեջ կասկածվում են ռուսաստանյան ռազմական բազայի կազմի մեջ մտնող անձինք կամ այդ անձանց ընտանիքների անդամները, ինչպես նաև կատարում են նախնական քննչական և այլ գործողություններ՝ մինչև Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների ներկայացուցչի ժամանումը, որին ըստ ցուցակի հանձնվում են գործին վերաբերող բոլոր նյութերը և իրեղեն ապացույցները:

Հայկական Կողմի իրավասու մարմինները անհապաղ ծանուցում են Ռուսաստանյան Կողմի իրավասու մարմիններին Ռուսաստանյան Դաշնության իրավասությանը վերաբերող կատարված և պատրաստվող հանցագործությունների մասին, որոնց կատարման մեջ կասկածվում են ռուսաստանյան ռազմական բազայի կազմի մեջ մտնող անձինք կամ այդ անձանց ընտանիքների անդամները, ինչպես նաև կատարում են նախնական քննչական և այլ գործողություններ՝ մինչև Ռուսաստանյան Դաշնության

իրավասու մարմինների ներկայացուցչի ժամանումը, որին ըստ ցուցակի հանձնվում են գործին վերաբերող բոլոր նյութերը և իրեղեն ապացույցները:

Այն դեպքում, երբ հանցագործություն կատարած անձը պարզված չէ, Կողմերի իրավասու մարմինները համատեղ են սահմանում հանցագործության հետքերի ամրապնդման, այն կատարած անձի հայտնաբերման և ձերբակալման միջոցները:

ՀՈԴՎԱԾ 8

Ռուսաստանյան ռազմական բազայի տեղակայման սահմաններում, Հայաստանի Հանրապետության իրավասությանը վերաբերող գործերով դատավարական, օպերատիվ-հետախուզական, քննչական կամ այլ գործողությունների կատարման անհրաժեշտության դեպքում, նմանօրինակ գործողությունները կատարվում են Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից Ռուսաստանյան Դաշնության իրավասու մարմինների հետ համատեղ, կամ Ռուսաստանյան Դաշնության իրավասու մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների գրավոր հարցումով, եթե դրանց կատարումը չի հակասում Ռուսաստանյան Դաշնության օրենսդրությանը:

ՀՈԴՎԱԾ 9

Ռուսաստանյան ռազմական բազայի տեղակայման կետերի տարածքից դուրս, Ռուսաստանյան Դաշնության իրավասությանը վերաբերող գործերով դատավարական, օպերատիվ-հետախուզական, քննչական և այլ գործողությունների կատարման անհրաժեշտության դեպքում, նմանօրինակ գործողությունները կատարվում են Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից Ռուսաստանյան Դաշնության իրավասու մարմինների գրավոր հարցումով, եթե դրանց կատարումը չի հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Ռուսաստանյան Կողմի խնդրանքով այդ գործողությունների կատարմանը կարող են մասնակցել Ռուսաստանյան Դաշնության իրավասու մարմինների ներկայացուցիչները:

ՀՈԴՎԱԾ 10

Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները Հայաստանի Հանրապետության իրավասությանը վերաբերող գործերով Ռուսաստանյան Դաշնության իրավասու մարմիններին անհապաղ տեղեկացնում են քրեական գործ հարուցելու յուրաքանչյուր դեպքի, ռուսաստանյան ռազմական բազայի կազմի մեջ մտնող անձի կամ այդ անձի ընտանիքի անդամների ձերբակալման կամ կալանավորման, ինչպես նաև քննության կամ դատաքննության արդյունքների մասին:

Հայաստանի Հանրապետության իրավասության մեջ գտնվող գործերով ռուսաստանյան ռազմական բազայի կազմի մեջ մտնող անձանց կամ նրանց

ընտանիքների անդամների ձերբակալման, կալանավորման, մեղադրանքի առաջադրման դեպքում, Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները այդ անձանց և նրանց ընտանիքների անդամներին, նրանց պահանջով, տրամադրում են պաշտպան /փաստաբան/՝ ձերբակալման, կալանավորման մեղադրանքի առաջադրման պահից:

Կողմերի իրավասու մարմինները ժամանակին ծանուցում են միմյանց դատավարական գործողությունների անցկացման անհրաժեշտության մասին, համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմական բազայի մասին Ռուսաստանյան Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև 1995թ. մարտի 16-ի պայմանագրին կից թիվ 1 Արձանագրության 9-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի: Ծանուցում ստանալու դեպքում իրավասու մարմինների ներկայացուցչի մասնակցությունն այդպիսի դատավարական գործողություններին պարտադիր է:

Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններն օգնություն են ցուցաբերում Ռուսաստանյան Դաշնության իրավասու մարմիններին ռուսաստանյան ռազմական բազայի կազմի մեջ մտնող այն անձանց հետախուզման և ձերբակալման գործում, որոնք թաքնվում են Հայաստանի Հանրապետության տարածքում և որոնց կողմից կատարված հանցագործությունները գտնվում են Ռուսաստանյան Դաշնության իրավասության տակ:

Հ Ո Դ Վ Ա Ծ 11

Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները, Ռուսաստանյան Դաշնության իրավասու մարմինների վճիռների և որոշումների հիման վրա, ապահովում են կալանքի տակ գտնվող անձանց պահպանումը, նրանց պաշտպանությունը, ուղեկցորդումը և տեղափոխումը /էտապավորումը/ Հայաստանի Հանրապետության տարածքի սահմաններում: Սույն Համաձայնագրի 5-րդ հոդվածում նշված անձանց ազատազրկման դատապարտելու մասին դատավճիռների կատարումն իրականացվում է Ռուսաստանյան Դաշնության տարածքում, իսկ սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածում նշված դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Հ Ո Դ Վ Ա Ծ 12

Ռուսաստանյան Դաշնության իրավասության տակ ընկնող գործերը քննվում են Ռուսաստանյան Դաշնության իրավասու մարմինների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմական բազայի տեղակայման կետերում կամ Ռուսաստանյան Դաշնության տարածքում:

Հ Ո Դ Վ Ա Ծ 13

Ռուսաստանյան ռազմական բազայի կազմի մեջ մտնող անձինք և այդ անձանց ընտանիքների անդամները Հայաստանի Հանրապետությունում

օգտվում են նույն իրավական պաշտպանությունից, ինչպես և նրա սեփական քաղաքացիները:

Հ Ո Դ Վ Ա Ծ 14

Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համաձայն, դատաքննության երապարակայնության սկզբունքը կիրառելիս, հաշվի են առնվում Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմական բազայի զինվորական կազմավորումների անվտանգության շահերը:

Հ Ո Դ Վ Ա Ծ 15

Ռուսաստանյան ռազմական բազայի ներքին գործունեությունը կանոնակարգվում է ռուսաստանյան օրենսդրությամբ: Բազայի տարածքում ծագող աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Ռուսաստանյան Դաշնության օրենսդրությամբ:

Հ Ո Դ Վ Ա Ծ 16

Ռուսաստանյան ռազմական բազայի, նրա կազմի մեջ մտնող անձանց և նրանց ընտանիքների անդամների և Հայաստանի Հանրապետության կազմակերպությունների ու քաղաքացիների միջև պայմանագրային հարաբերություններից ու պարտավորություններից բխող պահանջներով՝ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ որոշումները Հայաստանի Հանրապետության դատարանների կողմից ընդունվում են նրա օրենսդրությանը համապատասխան:

Այդ գործերով ռուսաստանյան ռազմական բազայի կազմի մեջ մտնող անձանց, այդ անձանց ընտանիքների անդամների նկատմամբ, ովքեր բնակվում են Ռուսաստանյան Դաշնության տարածքում, դատարանների որոշումների կատարումը իրականացվում է Ռուսաստանյան Դաշնության արդարադատության նախարարության միջոցով:

Հ Ո Դ Վ Ա Ծ 17

Սույն Համաձայնագրի կիրառման և մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են Ռուսաստանյան Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև 1995թ. մարտի 16-ի Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմական բազայի մասին Պայմանագրի 21-րդ հոդվածի համաձայն:

Հ Ո Դ Վ Ա Ծ 18

Սույն համաձայնագիրը ենթակա է վավերացման և ուժի մեջ է մտնում վավերագրերի փոխանակման պահից: Այն ուժի մեջ կմնա Ռուսաստանյան Դաշնության և Հայաստանի Հանրապետության միջև 1995թ. մարտի 16-ի ՀՀ տարածքում ռուսական ռազմական բազայի մասին Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում:

Կնքված է Մոսկվայում, 1997թ օգոստոսի 5-ին, երկու բնօրինակից, յուրաքանչյուրը հայերեն և ռուսերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստն էլ համազոր են:

Հայաստանի Հանրապետության կողմից	Ռուսաստանյան Դաշնության կողմից